ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ՆԱՐԵԿԱՑԻ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐ ԵՎ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Հայտնի է, որ համալսարանական ուսումնառության (1940–1945 թթ.) առաջին տարիներին, Զարենցի «օգնությամբ» հասկանալով, որ «բանաստեղծ չէ», Սևակը որոշում է նվիրվել գրականագիտությանն ու բանասիրությանը: Այդ տարիների համառ և քրտնաջան աշխատանքի մասին տեղեկություններ կան և՛ «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրականում[1], և՛ Ա. Արիստակեսյանի մենագրությունում[2]: Սկսում է գրաբարից, և այդ հսկայածավալ ժառանգությունը փորձում յուրացնել բնագրերով՝ «ոչ թե սոսկ կարգալով, այլ մշակելով ու կոնսպեկտավորելով, և այն էլ ոչ միայն բնագրերը, այլև նրանց մասին եղած պատմագիտական, գրականագիտական ուսումնասիրություններն ու աշխատությունները՝ Զամչյանից սկսած մինչև Մանուկ Աբեղյան»[3]: Գիտելիքների ծարավը Պարույր Սևակը հագեցնում էր ոչ միայն հայ և համաշխարհային գրականության բազմագարյա փորձի ուսումնասիրությամբ, այլև գիտատեխնիկական, ընդհանրապես մշակութաբանական բազմաբնույթ և բազմաբովանդակ հարցերում իրազեկված լինելու ջանադրությամբ: Այդ ամենը սնում և հարստացնում էր նրա հոգեմտավոր աշխարհը, լայնացնում աշխարհաճանաչողության սահմանները, ձևավորում գեղագիտական հասուն հայացք և բարձր ճաշակ:

Բազմազան է և լայն Սևակի գրականագիտական հետաքրքրությունների շրջանակը. այն ընդգրկում է և՛ միջնադարյան բանարվեստի ձեռքբերումներ, և՛ գրապատմական նոր ու նորագույն շրջանի գեղարվեստական իրողություններ: Այդ ամենը՝ ոչ թե փաստերի պարզ-ժամանակագրական հերթաշարումի իմացությամբ, այլ ներքին ժառանգորգական կապերի, տիպաբանական ընդհանրությունների և ազդեցությունների խորքային ընկալմամբ ու պատկերացմամբ: Գրականագիտությունը Սևակի համար, համակարգված և մեթոդաբանական ելակետերով հիմնավորված գիտահետազոտական աշխատանք լինելուց զատ, նաև ստեղծագործական պրոցես է, գեղարվեստական ընկալումի և վերակերպավորումի գործընթաց: Փաստական կամ վերլուծական-հետազոտական գյուտը գրականագետի համար նույն արժեքն ու իմաստն ունի, նույնքան ոգեղեն է և գեղագիտորեն ակտիվ, որքան հաջողված տողը, պատկերը կամ բառը բանաստեղծի համար. երկու գեպքում էլ անհայտի, առեղծվածի բացահայտման, ճանաչողության սահմանների հատումի և ճեղքումի հոգեզգայական վիճակն է: «Կու-

---

[1] Պ. Սևակ, Անցյալը ներկայացած.– «Սովետական գրականություն», 1971, № 2:
[2] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1974:
[3] Նույն տեղում, էջ 37:

զեի լավ գիտնական լինել,– գրում է նա,– բայց դրա համար խանգարում են երկու հանգամանք, որոնցից մեկը՝ ավել լինելու պատճառով, մյուսը՝ պակաս լինելու պատճառով»[4]: «Ավել-խանգարիչը» բանաստեղծ լինելն էր, «պակաս-խանգարիչը»՝ եվրոպական և արևելյան լեզուների իմացության պակասը: Եվ, այնուամենայնիվ, այս ավել-պակասը չխանգարեց Նրան դրելու իր ծանրակշիռ բանասիրական հետազոտություններն ու գրապատմական գիտարկումները, տեսական-քննադատական վերլուծություններն ու նկատառումները, որոնք ամփոփում էին գեղարվեստի գիտության սևակյան ելակետերն ու սկզբունքները:

Սևակի գրականագիտական հետաքրքրությունների շրջանակում հիմնարար տեղ է զբաղեցնում միջնադարյան հայ գրականությունը, մասնավորապես Նարեկացու բանարվեստն ու ստեղծագործական փորձը: Ընդհանրապես, Սևակը բնական և օրինաչափ էը համարում «գրական ծնողներ» և «գրական ծննդավայր» ունենալու, ստեղծագործական ազդեցություններ կրելու իրողությունը: Այդ կերպ՝ անտիկ դասական արվեստը մեծապես պայմանավորել է Վերածննդի և կլասիցիզմի գրականության ծննդաբանությունն ու զարգացման առանձնահատկությունները. Է. Պոն ըստ ամենայնի բորբոքել է Շ. Բոդլերի և Ա. Ռեմբոյի ստեղծագործական երևակայությունը, Ու. Ուիթմենը ճանապարհ է բացել Է. Վերհարնի, Պ. Ներուդայի, Պ. Էլյուարի, Վ. Մայակովսկու համար... Ազգային գրականության պատմության մեջ ազդեցության հզոր էներգետիկ դաշտ են ստեղծել Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Խ. Աբովյանն ու Րաֆֆին, Սիամանթոն և Դ. Վարուժանը, Վ. Տերյանը և Ե. Չարենցը:

Գրական առաջին իսկ քայլերից Նարեկացու արվեստը ոգևորել և ուղղորդել է Պ. Սևակին: Այդ են վկայում և՛ տարբեր առիթներով բանաստեղծի խոստովանությունները, և՛ ստեղծագործական ազդակներն ու առնչությունները: Սևակն իր ստեղծագործական ճանապարհը սկսել է Նարեկացու շնչով և նարեկացիական խորազննումների հետևությամբ: 1942 թ. փետրվար-մարտ ամիսներին գրած «Աղոթքներ» շարքն այդ ակնհայտ ազդեցության արդյունք է՝ աշխարհընկալման, պոետական կառուցումների, լեզվի և մտածողության ընդհանրություններով: Նարեկացու համար երգը հոգու աղոթքն է առ Աստված, որ երկնային շնորհ է, և երգի Արքան ինքը Աստվածն է՝ բարի ու արդարադատ, շռայլ ու անկողմնակալ, և մարդկության մեղքերն իր վրա ընդունած բանաստեղծը՝ որպես նորօրյա Հիսուս, Աստծուն է դիմում աղապատանքի և զորակցության աղերսով.

Զսկսեալս իմ դու կատարեա՛,
Եղիցի՛ հոգի քո խառնեալ ի սա,
Շունչ զաւրութեան մեծիդ միասցի՛
Ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս[5]:

---

[4] Նույն տեղում, էջ 79:

[5] Գ. Ն ա ր ե կ ա ց ի, Մատեան ողբերգութեան (աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի), Երևան, 1985, էջ 258 (այսուհետև այս գրքից հղումների կողքին բնագրում կնշվեն գլուխը և էջը):

Կամ՝

Ա՛յս պտուղք աւրհնութեան, գթած, սքանչելարմատ քում շառաւիղաց,
Ա՛յս արդասիք կենաց արարչականդ քո հրամանաց,
Մ՛յս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց,
Ա՛յս նշոյլք լուսոյ ամենասփիւռդ ճառագայթից,
Ա՛յս ախորժութիւն ճաշակաց բարեբանեալդ քո քաղցրութեան:

Քո միայնոյ են այսոքիկ, տէ՛ր,
Ի քէ՛ն ազդեցաւ դրել ինձ ղսոսին:
/Բան Հ Դ, էջ 542/

Սևակի համար Նարեկացին է երդի Արքան, որից ոգեղեն հրդեհ և բանաստեղծական շնորհ է հայցում.

Ով Արքա, պարգևիր այդ երդը, պարգևիր այդ երգը այսօր,
Պարգևիր գեթ այսօր միայն, որ թեթև չնչեմ,
Տու՛ր հոգուս հաղթություն, երբ այսօր խեղճ է ու անզոր:
Երբ այսօր ոչինչ է...

Եվ ապա իմաստավորում է նրա խոսքի արժեքն ու խորհուրդն այս կերպ.

Դու Խորհուրդ, Դու Պատգամ, Դու Պարգև իմ հոգուն
Դու Շունչ, Դու Ոգի, Դու Կրակ ... հոգուս ճահիճում, պատվաստված,
Դու անեզրական իմ երկինքների անխարդախ Աստված,
Դու Դև, որին, սակայն, պաշտում են, ոչ թե անիծում[6]*:*

Ի՞նչն է քաղաքակրթական-մշակութաբանական բոլորովին այլ փորձի, հոգևոր-ճանաչողական այլ կենսապայմանների տեր բանաստեղծին մերձեցնում ճգնադավան, մարմնամերժ և աշխարհախույս միջնադարի միստիկ ապաշխարողին, դնահատության ի՞նչ ելակետեր են գործարկվում 20-րդ դարի մտածողի կողմից, տիպաբանական ի՞նչ ընդհանրություններով է պայմանավորվում կարևորումի փորձը: «Նրա ստեղծագործությունը,– գրում է Սևակը,– լի է ողբերգականությամբ. անմարդկային աշխարհի դեմ մեն-մենակ մնացած անհատը, չկորցնելով հավատը մարդկանց հանդեպ, շարունակում է ճշմարտություն և արդարություն որոնել: Այս բախումն ինձ անվերջ հուզում է: Արևմուտքի պոեզիան դրանից ելք դտավ եսակենտրոնությամբ ու անհատապաշտությամբ: Ինձ մոտ է հենց Նարեկացու՛ պոեզիան. այն թույլ է տալիս ելք գտնել մարդկային անհատականության զարգացման համար հանրության հետ ներդաշնակված: Նարեկացու պոեզիան բացահայտել է որոնող ու տենչացող ոգու ճշմար-

[6] *Ա. Արիստակեսյան, նշվ. աշխ., էջ 41:*

տության այնպիսի խորություններ, որոնք առ այսօր ցնցում են իրենց մարդկայնությամբ»[7]:

Սյս հատվածում գնահատության երեք հիմնարար ելակետեր են առանձնաշեշտվում՝ Նախ՝ քնարերգության միանգամայն նոր որակի ստեղծում՝ անձնականի և ընդհանրականի միատեղումով, այն, ինչ Նարեկացիական «Ե՛ս ամենայնն, եւ յի՛ս ամենեցունն» բանաստեղծական խտացումով է ներկայանում, ասա՝ ձգտումը խոհի ու խոսքի ակոսումներով բացահայտելու մարդկային հոգու և կեցության խորհուրդը (ա՛յն, ինչը Սևակը ձևակերպում էր որպես ներքին բարձունքները մագլցելու, նևրանձավային գաղտնարանները թափանցելու ճիգ, և այն, ինչին հասավ «Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս» դրքերով), որից էլ սկիզբ է առնում ներքին հզոր ալեբախությունը՝ դրամատիկ ընթացքով և ողբերգական շեշտադրումներով. աստվածային կատարելության իդեալը բախվում է մարդկային նկարագրի անկատարության պատին: Բախումը, սակայն, չի դարձնում Նարեկացուն մարդախույս կամ մարդատյաց, այլ մղում է փրկության ելքեր որոնելու. մեծագույն և ճշմարիտ ճանապարհ է դառնում սրբազան ապաշխարանքը: 20-րդ դարի գրականությանը բնորոշ անհատապաշտական որոնումներում, մենության, հիասթափության ու անհուսության, սարսափի, անորոշության ու մահվան զգացողություններում Սևակը ևս հաշտեցումի եզրեր է որոնում. ժամանակի բարդ ու ողբերգական վերապրումը չի խանգարում լույսի փնտրտուքին, որովհետև իր համար դա հավասարազոր էր պարտության, նահանջի: Սևակի մարտնչող և կառուցողական լավատեսությունը հասարակության հոգևոր-բարոյական վերափոխությանն է միտվում:

Սևակի համար Նարեկացին նաև բանարվեստի ուղենիշ է եղել, բառի և պատկերի կառուցման չափանիշ: «... Վարպետության և գեղարվեստական արտահայտչականության հզորության ու բազմազանության տեսակետից,– նկատում է Սևակը,– նրա արվեստն այնքա՜ն բացառիկ է, որ այն, ստեղծված X դարում, ոչ միայն հայ գրականության մեջ ոչ ոքի կողմից չի գերազանցվել, այլև ոչ ոք, բացի Չարենցից, չի կարողացել անդամ մոտենալ նրան: Ե՛վ բանաստեղծական ձևի, և՛ բանաստեղծական մտածողության ասպարեզում Նարեկացու պոեզիան ինձ շատ արժեքավոր բան է տալիս»[8]:

Սևակը՝ իր ժամանակի ու անհատական փորձի դրոշմով, շարունակում է Նարեկացու մարդախուզական որոնումները՝ ինքնաձաղկումի և ինքնազոհաբերումի աննահանջ հաստատակամությամբ, կյանքի բարդ ու տարողունակ դրսևորումների, մարդկային հոգու հակադրություններով միասնական և միասնության մեջ ներհակ ելևէջումներով, բանաստեղծական պատկերի նյութով և ստեղծագործական մտածողությամբ պայմանավորված ճյուղավորումներով ու ներքին ճեղքումներով, լեզվի հորդուն, հարահոս տեղատարափով և ինքնեկ հայտնություններով:

Սևակի գեղագիտության հիմնարար դրույթներից մեկը ևս համանվազայնությունը, նարեկացիական ծաղումնաբանական ազդակներ ունի:

---

[7] *Պ. Սևակ, Իմ նյութը մարդն է.–* "Дружба народов", *1964, № 6, էջ 235:*
[8] *Նույն տեղում:*

«Մատյան ողբերգության» պոեմն ունի արձակ հավելված «Ցիշատակարան մատենիս գրութեան», որում հեղինակն այսպես է բնութագրում ստեղծագործական կառուցումի իր սկզբունքը. «... ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբասմաստեղնեան դրուագս գրութեան այսմ սոփերի արգասաւորի...»: Նարեկացու պոեմում ստեղծագործական նյութը ձև ու կերպարանք է ստանում հոգեբանական հարափոխ կացություններ, անընդհատ խորացող և գտանող բանաստեղծական դիտողականության նորանոր ու նորակերպ արգասավորումներով:

Սևակի բանաստեղծական համակարգում այս մոտեցումը դրսևորման արդիական ձևեր է ընդունում. ոչ թե մենաձայնություն, այլ բազմաձայնություն, ոչ թե երգային, այլ համանվագային մտածողություն, ոչ թե մի երգ, «որի եղանակը վերջանում է առաջին իսկ տնով..., այլ մի երգ, որի յուրաքանչյուր հաջորդ տունը նախորդ տան եղանակը փոփոխակում ու զարգացնում է բոլորովին այլ ձևերով»[9]:

Նարեկացու պոեմում կարդում ենք.

...Ուստի եւ փոխեալ զեղանակ բանիս,
Այլ ոչ զեղկութիւն աղէտիս:

/Բան Ի6, 339/

Այսինքն փոխում եմ խոսքիս եղանակը և ոչ թե աղետյալիս ողբն ու եղուկ տալը, որ նույնն է, թե փոխում է խոսքի նույն առարկան, նույն նյութը բնութագրող ձևերը, օգտագործում ասելիքն ամբողջացնելուն միտված բազմազան միջոցներ՝ զուգորդյալ մանրամասներով, պատկերային հարուստ զուգորդություններով, բառային և զգացական տեղատարափով:

Սևակին ևս չի գոհացնում ասելիքը մեկ-երկու պատկերի մեջ սեղմելխտացնելու ճանապարհը: Էպիկական շնչին, ասելիքի ծավալային լայնացումներին գումարվում է զգացական հրգեհն ու մտային շիկացումը. երբեմն զգացմունքն այնպես է հորգում, և միտքն այնպես է սուրում, որ տարափի պես են թափվում բառերն ու պատկերները, ինչը հուզարտահայտչական հզոր լիցք է հաղորդում բանաստեղծությանը: Սևակը հիմնականում սանձում է մտքի թռիչքը, թեև սպրգում են նաև ձգձգվածության և երկարաբանումի երանգներ:

Նարեկացու արվեստի բնութագրությունները Սևակի գեղագիտական կողմնորոշման, գեղարվեստական ընկալումների, չափածո խոսքի կառուցման սկզբունքների գրսևորումներ են, որոնք ուղիներ են մատնանշում գեպի հենց իր ստեղծագործական աշխարհը:

Նարեկացի – երևույթի ընկալման տեսակետից հատկանշական է Սևակի «Գրիգոր Նարեկացի» հոդվածը, որը, ըստ էության, ոչ թե մեծ ողբերգուի արվեստի քննություն-վերլուծություն է, այլ ընդհանուր արժևորումի փորձ: Հետաքրքրական են Սևակի գնահատության ելակետերը. գրանք բխում են իր գեղագիտական գավանանքից և ստեղծագործական ըմբռ-

[9] Պ. Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 259 (այսուհետև այս ժողովածուից հղումների կողքին բնագրում կնշվեն հատորը և էջը):

նումներից: Կարևորումի առանցք է դառնում նախ՝ Նարեկացու արվեստի նորարարական-հեղաբեկիչ ուժը: Վանական աշխարհայեցողության սահմանափակությանն ու անկենդանությանը, հոգևոր երգերի միանվագությանն ու միապաղաղությանը Նարեկացին հակադրում է կենսածին ապրումներ և զգացողություններ, անհատական հայացք և մոտեցումներ, կենդանի բնություն և ինքնատիպ գեղեցկություններ՝ աշխարհիկ տաղերի չավական և արտահայտչական ձևերի, հանգահնչյունական կառուցումների անկաշկանդ ու ազատ դրսևորումներով, խոհի և խոսքի բնաբուխ անցումներով ու ծավալումներով: «Իսկ Նարեկացին (արդիական բառով ասած) ոտից գլուխ նորարար էր և վիթխարի անհատականություն,– դրում է Սևակը,– Նարեկացու տաղերգությունը շարականների շարունակություն է՝ ըստ ժամանակի, բայց գրանց ժխտումն է՝ ըստ էության: Շարականների կաղապարվածության դիմաց Նարեկացին դրեց իր անկաշկանդությունը, նրանց խորհրդանիշների դեմ՝ իր կենդանի պատկերները, նրանց բնազրկության տեղ՝ իր բնապաշտությունը, նրանց արարողական առկախության փոխարեն՝ իր բանաստեղծական անկախությունը» /V, 245/:

Իբրև ապաշխարության հոգևոր երգերի շարունակություն՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, իրավամբ, նշանավորեց միանգամայն նոր որակ հայոց բանաստեղծության ճանապարհին՝ և՛ բազմանիստ ու բազմաձայն մտածողությամբ, և՛ բառապատկերային միջոցների բազմազանությամբ, և՛ գեղարվեստական խոսքի հագեցածությամբ ու պոետական լեզվի աշխարհականացմամբ: Նարեկացուն բնութագրելիս Սևակն օգտագործում է «աստվածախույզ», «մարդախույզ» մակդիրները հավելելով. «Նա մեր առաջին մարդագիրն է և մեծագույն մարդերգուն» /V, 249/: Եվ, իրոք, այն ժամանակներում, երբ վանական աշխարհայեցողությունը տիրում էր ամենեցուն և բոլորեքյան, երբ մարդը, լինելով մեղսական գոյություն, բանադրված էր մնալու հավիտենապես անդեմ ու անհայտ, Նարեկացին «մեղայ-կորեա-ողորմեա» մտային եռուզեռ ծավալումներով չնչավորում-կենդանացնում է նրան՝ ազատելով դաբերի գերեզմանյալ լռությունից: Այո՛, «Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ», բայց ի վերայ և յաղագս մարդու, նրա հոգում մշտապես առկա ներհակությունների, դրանում ընթացող հարատև պատերազմի, որ ինքնաճանաչողության և ինքնամաքրումի ճանապարհն է:

Մեկ այլ առիթով «Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը» հարցազրույցում Սևակն ուշադրություն է հրավիրում Նարեկացու պոեմի մի առանձնահատկության վրա ևս՝ լեզվի, որ հեղինակի ոչ միայն անհատական մտածողության, այլև ազգային հոգեբանության կնիքն է կրում: «Նրա հանճարեղ պոեմը իր նյութով ոչ մի առնչություն չունի հայ ժողովրդի հետ,– նկատում է Սևակը:– Նույնիսկ ՀԱՅ բառը չկա պոեմում... բայց այդպե՛ս աղոթել, մարդկային տառապանքների, տվայտանքների մասին այդպե՛ս ճենճերալով խոսել կարող էր միայն զավակը այն ժողովրդի, որ ավելի քան հինգ հարյուր տարի զրկված էր պետականությունից, գտնվում էր ազգային ահավոր ճնշումների տակ... ուստի առավելագույնս երազում էր

հոգևոր հայրենիքի մասին, որ թվում էր կգտնի Արքայությունում» /V, 395/:

Սևակի այս գնահատության մեջ որոշարկվում է նրա հստակ վերաբերմունքն արվեստի մեջ ազգայինի խնդրի կապակցությամբ. իրապես ազգայինը ոչ թե ճչացող բառերի հուլունքաշարն է, այլ ապրումների ու զգացողությունների, մտածումների ու մոտեցումների գեղարվեստական խոսքի ներքին հարթությունում կուտակված ոգեղեն նստվածքը: Ազգային բանաստեղծության ներքին հատկանիշները իրավացիորեն որոնելով հիմնականում լեզվի տիրույթներում, որով, ըստ էության, փոխանցվում է գեղարվեստական ամբողջ ինֆորմացիան, Սևակն ընդգիմանում է ազգայինի գաղափարը պարզունակացնողների, դրա սահմանները խեղդելու չափ նեղացնողների մակերեսային պատկերացումներին՝ դրանով իսկ լայնացնելով ստեղծագործական գործունեության դաշտը և արվեստագետի համար այնքան անհրաժեշտ ստեղծագործական ազատության հնարավորությունները՝ Ահա գեղարվեստական մտածողության այս ազատությունն է Նարեկացուն հաղորդել խորքային տեսանումի և մարդու մեջ հավիտենական մարդկայինի բացահայտումի բացառիկ կարողություն, որի պարդևն է դարձել մատյանի արժեքի հավերժությունը.

...Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու,
Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի
Գրեցա՛յց կենդանի:

/Բան ՁԸ, 599/

«Նա նման է ... հորիզոնի,– դրում է Սևակը,– որքան հեռանում ես իրենից՝ նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն՝ այնքան հեռանում է նա, մնալով միշտ անհաս և անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող» /V, 243/:

Նարեկացիով սկզբնավորվող մարդախուզական-խոստովանանքային պոեզիայի գրական ավանդույթը շարունակվեց հայոց բանաստեղծության պատմական զարգացման տարբեր փուլերում, նաև Սևակի պոեզիայում՝ ժամանակակից մարդու «ներանձավային գաղտնարանների» խորազննումներով, նրա կերպարում լույսի և ստվերի տարափոխ անցումներով, հոգևոր վերափոխումի անկասելի տենչով, ինչը և արգասավորեց լույսի և գույնի գեղագիտության, համանվագային-բազմաձայն մտածողության, երաժշտական կառուցումի լայն հնարավորություններ, քնարական խոհի գեղարվեստական արտահայտումի բազմազան ձևեր ու միջոցներ:

ПАРУЙР СЕВАК – НАРЕКАЦИ. ТВОРЧЕСКИЕ ИМПУЛЬСЫ И СВЯЗИ

РУЗАН АРИСТАКЕСЯН

Р е з ю м е

Паруйр Севак был искусным литературным критиком, теоретиком и историком литературы. Многогранен и широк круг его литературоведческих интересов; он охватывает и древние литературные ценности, и поэтические завоевания, а также художественные особенности новой литературной эпохи. В рамках этих интересов особое место занимает средневековая армянская литература, в частности, творческая лаборатория Григора Нарекаци. Его искусство направляло Севака в области новых поэтических исканий и художественного мышления. Историко-художественное и историко-сравнительное исследование дает возможность Севаку представить своеобразие и ценность творчества Нарекаци в цепи национальных традиций и общих закономерностей литературного мышления.